ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Շինուհայր, (0284) 95530 tatev.syuniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ԱՊՐԻԼԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ N 05-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 13-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ, 62-րդ և 63-րդ հոդվածներով, համաձայն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի ղեկավարի առաջարկության, որոշման նախագծի կողմ-8, դեմ-0, ձեռնպահ-0 քվեարկության արդյունքներով, ավագանին ***որոշում է՝***

Հաստատել Տաթև համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 13-ի հերթական նիստի հետևյալ օրակարգը.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի 2023 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին
2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքին սեփականության իրավունքով պատկանող գույքի ամենամյա գույքագրման փաստաթղթերի հաստատման մասին
3. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի 2022 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետությունը հաստատելու մասին
4. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի 2023 թվականի բյուջեի կատարման առաջին եռամսյակի ընթացքի մասին
5. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 54-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին
6. ՄԱԿ–ի Պարենի համաշխարհային ծրագրի կողմից Տաթև համայնքում 40□15 կՎա դրվածքային հզորությամբ արևային ֆոտովոլտային կայանի տեղադրման ծրագրին հավանություն տալու և համայնքի 2023 թվականի բյուջեից համաներդրում ապահովելու մասին

7. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության հողերից Սիմոնյան կրթական հիմնադրամին անհատույց տրամադրելու մասին
8. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի ավագանու <<Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը եվ պաշտոնային դրույքաչափերը սահմանելու մասին>> 2022 թվականի դեկտեմբերի 26-ի N 56-Ա որոշման մեջ փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՍԵՎԱԿ

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ՊԱՐՈՒՅՐ

ԳԵՐԱՍԻՄՅԱՆ ՄԱՐԱՏ

ԼԱԼԱՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՄԻՆԱՍՅԱՆ ԴԻԱՆՆԱ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՍՅԱ

ՎԼԱԴԻՄԻՐՅԱՆ ՆԱՌԱ

ՓԱՐՍՅԱՆ ԵԳՈՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԼԱԼԱՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Շինուհայր, (0284) 95530 tatev.syuniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ԱՊՐԻԼԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ N 06-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.1-կետով, համաձայն համայնքի ղեկավարի առաջարկության, որոշման նախագծի՝ կողմ-8, դեմ -0, ձեռնպահ -0, քվեարկության արդյունքներով, ավագանին ***որոշում է՝***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի 2023 թվականի տարեկան աշխատանքային պլանը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՍԵՎԱԿ

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ՊԱՐՈՒՅՐ

ԳԵՐԱՍԻՄՅԱՆ ՄԱՐԱՏ

ԼԱԼԱՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՄԻՆԱՍՅԱՆ ԴԻԱՆՆԱ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՍՅԱ

ՎԼԱԴԻՄԻՐՅԱՆ ՆԱՌԱ

ՓԱՐՍՅԱՆ ԵԳՈՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՄՎԵԼ ԼԱԼԱՅԱՆ**

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Տաթև համայնքի տարեկան աշխատանքային պլանը (ՏԱՊ-ը) նպատակ ունի արդյունավետ պլանավորման միջոցով բարելավել համայնքում կայացվող որոշումների որակը: Հիմք ունենալով համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը, ՏԱՊ-ը ուղղված է հստակեցնելու տարեկան կտրվածքով համայնքի զարգացմանն ուղղված ծրագրերը և միջոցառումները, դրանց իրականացման համար ներդրվող ռեսուրսներն ու ժամկետները: Որպես համայնքի տարեկան ծրագրային փաստաթուղթ, այն նպատակ ունի ներգրավել համայնքի ներքին և արտաքին ներդրողների հնարավորությունները՝ համայնքային խնդիրներն առավել արդյունավետ լուծելու գործում:

Տաթև համայնքի 2023 թ. ՏԱՊ-ը բաղկացած է հինգ հիմնական բաժիններից, որոնք կառուցված են ծրագրերի նպատակներից արդյունքներին հասնելու տրամաբանական հենքի վրա:

Համայնքի տեսլականը և ոլորտային նպատակները սահմանում են 2023 թ Տաթև համայնքում ՏԻՄ-երի լիազորությունների շրջանակներում սահմանված նպատակները, զարգացման հիմնական ուղղությունները և խթանները:

ՏԱՊ-ում ներկայացված է նաև համայնքային սեփականություն հանդիսացող գույքի կառավարման տարեկան ծրագիրը՝ պլանավորված գործընթացները և գործողությունները:

ՏԱՊ-ում նախատեսված ծրագրերի ֆինանսավորման պլանը սահմանում է ֆինանսավորման այն աղբյուրները, որոնք պետք է ապահովեն դրանց իրականացումը:

Տաթևի համայնքապետարանի առաջատար մասնագետ՝ **Աննա Գրիգորյան**

13.04.2023թ.

գ. Շինուհայր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Շինուհայր, (0284) 95530 tatev.syuniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ԱՊՐԻԼԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ N 07-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԻ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 32-րդ կետով, 77 հոդվածի 3-րդ կետով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի՝ կողմ-8 , դեմ-0 , ձեռնպահ-0, քվեարկության արդյունքներով, ավագանին ***որոշում է՝***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի սեփականություն հանդիսացող գույքի համայնքի ղեկավարի կողմից կազմված ամենամյա գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն կից հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրանից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՍԵՎԱԿ

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ՊԱՐՈՒՅՐ

ԳԵՐԱՍԻՄՅԱՆ ՄԱՐԱՏ

ԼԱԼԱՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՄԻՆԱՍՅԱՆ ԴԻԱՆՆԱ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՍՅԱ

ՎԼԱԴԻՄԻՐՅԱՆ ՆԱՌԱ

ՓԱՐՍՅԱՆ ԵԳՈՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԼԱԼԱՅԱՆ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀՀ Սյունիքի մարզի Տաթև համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող գույքի ամենամյա գույքագրման համար համայնքի ղեկավարի կարգադրությամբ համայնքում կազմավորվել է գույքագրման հանձնաժողով , որը 2023թվականի հունվարի 4–ից մինչև փետրվարի 1–ը Տաթև համայնքի ութ բնակավայրերում իրականացրել է գույքագրման աշխատանքներ: Գույքագրվել են Տաթևի համայնքապետարանի, համայնքի բնակավայրերի վարչական նստավայրերի, համայնքային ենթակայության ՆՈՒՀ–երի, Շինուհայրի երաժշտական դպրոցի և «Բարեկարգում և գյուղաշխատանքներ» ՀՈԱԿ–ի համայնքային սեփականություն հանդիսացող գույքերը:

Տաթևի համայնքապետարանի աշխատակազմի

գլխավոր մասնագետ՝ Ս.Հովհաննիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Շինուհայր, (0284) 95530 tatev.syuniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ԱՊՐԻԼԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ N 08-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ կետով և նկատի ունենալով համայնքի ղեկավարի ներկայացրած ամենամյա հաշվետվությունը, որոշման նախագծի կողմ -8 , դեմ - 0, ձեռնպահ -0, քվեարկության արդյունքներով, ավագանին ***որոշում է***՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի 2022 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՍԵՎԱԿ

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ՊԱՐՈՒՅՐ

ԳԵՐԱՍԻՄՅԱՆ ՄԱՐԱՏ

ԼԱԼԱՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՄԻՆԱՍՅԱՆ ԴԻԱՆՆԱ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՍՅԱ

ՎԼԱԴԻՄԻՐՅԱՆ ՆԱՌԱ

ՓԱՐՍՅԱՆ ԵԳՈՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԼԱԼԱՅԱՆ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ
2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՏԱՐԵԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

Տաթև համայնքի 2022 թվականի բյուջեի տարեկան եկամուտների և ծախսերի կատարողականի վերաբերյալ համայնքի ղեկավարի հաղորդումների որոշման նախագիծը մշակվել է «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասին 1-ին կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը կատարելու համար: Տաթև համայնքի 2022 թվականի վարչական բյուջեի եկամտային մասով պլանավորված 300984.227 (այդ թվում սեփական եկամուտ՝91520.527) հազար դրամի դիմաց փաստացի եկամուտը կազմել է 269753.606 հազար դրամ տոկոսային արտահայտությամբ տարվա կտրվածքով կատարվել է 89,62 %-ով. այդ թվում սեփական եկամուտ՝ 60289.606 հազար ՀՀ դրամ,կամ 65.9%):

Ըստ հարկատեսակների կատարողականը ունի հետևյալ տեսքը .

Հաշվետու ժամանակաշրջանում գույքային հարկեր անշարժ գույքի գծով նախատեսված 17158.0 հազար դրամի դիմաց փաստացի եկամուտը կազմել է 11974.022 հազար դրամ, տարվա ծրագիր նկատմամբ կատարողականը կազմել է 69.78 %-Գույքային հարկեր այլ գույքից (փոխադրամիջոցների) գծով նախատեսված 22000.0 հազար դրամի դիմաց փաստացի եկամուտը կազմել է 17157.112 հազար դրամ, տոկոսային տարվա ծրագրի նկատմամբ 78 % Տեղական տուրքերի գծով նախատեսված 1720.4 հազար դրամի դիմաց փաստացի եկամուտը կազմել է 632.1 հազար դրամ, տոկոսային արտահայտությամբ տարվա ծրագրի նկատմամբ կատարողականը կազմել է 36.74 %

Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիայի մասով նախատեսված 209463.7 հազար դրամը հատկացվել է, այսինքն կատարողականը կազմել է 100%: Գույքի վարձակալությունից եկամուտների գծով նախատեսված 16230.127 հազար դրամի դիմաց փաստացի եկամուտը կազմել է 18045.563 հազար դրամ, տարվա ծրագրի նկատմամբ 111.18 % , այդ թվում համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարներ՝պլանավորված 9472.127 հազար դրամի դիմաց կատարողականը տարվա կտրվածքով կազմել է 12692.192 կամ 134%, այլ գույքի վարձակալությունից մուտքեր պլանավորված 6758.0 հազար դրամի դիմաց կատարողականը տարվա ծրագրի նկատմամբ կազմել է 5353.371 հազար դրամ, կամ 79.2%:

Տույժերից,տուգանքներից եկամուտների գծով նախատեսված 8000,0 հազար դրամի դիմաց փաստացի եկամուտը կազմել է 4314.724 հազար դրամ, տոկոսային արտահայտությամբ տարվածրագրինկատմամբ53.9%,

Վարչական գանձումներից ստացվող միջոցներից, (որը իր մեջ ներառում է աղբահանության վճարը,համայնքային ենթակայության նախադպրոցական և արտադպրոցական դաստիարակության ծնողական վճարները) նախատեսված 9312.0 հազար դրամի դիմաց փաստացի եկամուտը կազմել է 7083.218 հազար դրամ, տոկոսային արտահայտությամբ տարվա ծրագրի նկատմամբ 76.1 %:

Ծախսերի գծով կատարողականը ունի հետևյալ տեսքը .

Հաշվետու ժամանակաշրջանում բյուջեի ծախսային մասով նախատեսած 300984.227 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը տարվա կտրվածքով կազմել է 246539.835 հազար դրամ, տարվա ծրագրի նկատմամբ կատարողականը կազմել է 81.9 % (տես հատված 2, 6):

Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների հատվածին պլանավորված 131765.0 հազար դրամի դիմաց կատարողականը տարվա ծրագրի նկատմամբ կազմել է 110628.486 83.96 %:

Տնտեսական հարաբերությունների գծով գյուղատնտեսություն ծրագրով պլանավորված 66490.0 հազար դրամի դիմաց կատարողականը կազմել է 61731.0 հազար դրամ, կամ 92.84 % :

Հանգիստ, մշակույթ և կրոն ոլորտի պահպանման համար պլանավորված 3800.0 հազար դրամի դիմաց կատարողականը կազմել է 2734.830 հազար դրամ կամ 71.97 %:

Նախադպրոցական հիմնարկների պահպանման համար պլանավորված 41489.924 հազար դրամի դիմաց կատարողականը կազմել է 39792.155 հազար դրամ, կամ 95.9 %, իսկ արտադպրոցական հիմնարկների պահպանման համար պլանավորված 19500.0 հազար դրամի դիմաց կատարողականը կազմել է 19472.945 հազար դրամ, կամ 99.86 %:

Սոցիալական պաշտպանություն ոլորտի համար հաշվետու ժամանակաշրջանում 9000.0 հազար դրամի դիմաց հատկացվել է 3570.0 հազար դրամ, կամ 39.67%

Գլխավոր մասնագետ Արթուր Հովակիմյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Շինուհայր, (0284) 95530 tatev.syuniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ԱՊՐԻԼԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ N 09-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի դրույթներով, որոշման նախագծի՝ կողմ -8, դեմ-0 , ձեռնպահ -0 , քվեարկության արդյունքներով, ավագանին ***որոշում է***՝

Ընդունել ի գիտություն՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Մարատ Գերասիմյանի հաղորդումը Տաթև համայնքի բյուջեի 2023 թվականի առաջին եռամսյակի ընթացքի մասին՝ համաձայն բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվության հավելվածի:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՍԵՎԱԿ

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ՊԱՐՈՒՅՐ

ԳԵՐԱՍԻՄՅԱՆ ՄԱՐԱՏ

ԼԱԼԱՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՄԻՆԱՍՅԱՆ ԴԻԱՆՆԱ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՍՅԱ

ՎԼԱԴԻՄԻՐՅԱՆ ՆԱՌԱ

ՓԱՐՍՅԱՆ ԵԳՈՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԼԱԼԱՅԱՆ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
ՏԱԹև ՀԱՄԱՅՆՔԻ
2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

Տաթև համայնքի 2023 թվականի բյուջեի առաջին եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականի վերաբերյալ համայնքի ղեկավարի հաղորդումների որոշման նախագիծը մշակվել է «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասին 1-ին կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը կատարելու համար: Տաթև համայնքի 2023 թվականի առաջին եռամսյակի վարչական բյուջեի եկամտային մասով պլանավորված 69881.525 հազար դրամի դիմաց (այդ թվում սեփական եկամուտ՝19729.3 հազար) փաստացի եկամուտը կազմել է 60248.600 հազար դրամ, տոկոսային արտահայտությամբ եռամսյակի կտրվածքով կատարվել է 86.2 %-ով. այդ թվում սեփական եկամուտ՝ 9961.8 հազար ՀՀ դրամ,կամ 50.49%): (տես հատված 1):

Ըստ հարկատեսակների կատարողականը ունի հետևյալ տեսքը .

Հաշվետու ժամանակաշրջանում գույքային հարկեր անշարժ գույքի գծով նախատեսված 6302.2 հազար դրամի դիմաց փաստացի եկամուտը կազմել է 1208.397 հազար դրամ,եռամսյակի կտրվածքով տոկոսային արտահայտությամբ այն կատարվել է 19.17 %-ով:Գույքային հարկեր այլ գույքից (փոխադրամիջոցների) գծով նախատեսված 5668.450 հազար դրամի դիմաց փաստացի եկամուտը կազմել է 4774.049 հազար դրամ, տոկոսային արտահայտությամբ եռամսյակի կտրվածքով կատարվել է 84.2 %-ով, Տեղական տուրքերի գծով նախատեսված 430.1 հազար դրամի դիմաց փաստացի եկամուտը եռամսյակի կտրվածքով կազմել է 58.7 հազար դրամ, տոկոսային արտահայտությամբ կատարվել է 13.65%-ով:

Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիայի մասով նախատեսված 50152.225 հազար դրամը հատկացվել է, այսինքն կատարողականը կազմել է 100%: Գույքի վարձակալությունից եկամուտների գծով նախատեսված 4083.550 հազար դրամի դիմաց փաստացի եկամուտը կազմել է 2630.150 հազար դրամ, առաջին եռամսյակի կտրվածքով տոկոսային արտահայտությամբ կատարվել է 64.4%-ով, այդ թվում համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարներ՝պլանավորված 2383.550 հազար դրամի դիմաց կատարողականը եռամսյակի կտրվածքով կազմել է 915.850 հազար դրամ, կամ 38.4% այլ գույքի վարձակալությունից մուտքեր պլանավորված 1700.0 հազար դրամի դիմաց կատարողականը եռամսյակի կտրվածքով կազմել է 1714.3 հազար դրամ, կամ 100.8%: Տույժերից,տուգանքներից եկամուտների գծով նախատեսված 500.0 հազար դրամի դիմաց փաստացի եկամուտը կազմել է 0 դրամ, Վարչական գանձումներից ստացվող միջոցներից, (որը իր մեջ ներառում է աղբահանության վճարը,համայնքային ենթակայության նախադպրոցական և արտադպրոցական դաստիարակության ծնողական վճարները) նախատեսված 2220.0 հազար դրամի դիմաց փաստացի եկամուտը կազմել է 1264.0 հազար դրամ, տոկոսային արտահայտությամբ եռամսյակի կտրվածքով այն կատարվել է 56.94 %-ով:

Ծախսերի գծով կատարողականը ունի հետևյալ տեսքը .

Հաշվետու ժամանակաշրջանում բյուջեի ծախսային մասով նախատեսած 70154.775 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը եռամսյակի կտրվածքով կազմել է 60495.745 հազար դրամ, այն կատարվել է 86.23 %-ով (տես հատված 2, 6):

Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների հատվածին պլանավորված 30251.0 հազար դրամի դիմաց կատարողականը եռամսյակի կտրվածքով կազմել է կազմել է 30467.300 հազար դրամ, կամ 100.72 % :

Տնտեսական հարաբերությունների գծով գյուղատնտեսություն ծրագրով պլանավորված 16750.0 հազար դրամի դիմաց կատարողականը եռամսյակի կտրվածքով կազմել է 14649.554 հազար դրամ, կամ 87.46 % :

Հանգիստ, մշակույթ և կրոն ոլորտի պահպանման համար պլանավորված 1000.0 հազար դրամի դիմաց կատարողականը եռամսյակի կտրվածքով կազմել է 0 դրամ:

Նախադպրոցական հիմնարկների պահպանման համար պլանավորված 11779.0 հազար դրամի դիմաց կատարողականը եռամսյակի կտրվածքով կազմել է 9062.411 հազար դրամ, կամ 76.94 %, , իսկ արտադպրոցական հիմնարկների պահպանման համար պլանավորված 5297.5 հազար դրամի դիմաց կատարողականը եռամսյակի կտրվածքով կազմել է 5256.481 հազար դրամ, կամ 99.23 %:

Սոցիալական պաշտպանություն ոլորտի համար հաշվետու ժամանակաշրջանում հատկացվել է 1060.0 հազար դրամ:

Գլխավոր մասնագետ Ա.Յուսուֆյան Արթուր Հովակիմյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Շինուհայր, (0284) 95530 tatev.syuniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ԱՊՐԻԼԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ N 10-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի ԹԻՎ 54-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով ու «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով, հիմք ընդունելով Տաթև համայնքի ավագանու 2023 թվականի հունվարի 20–ի թիվ 03–Ա որոշումը, հաշվի առնելով՝ «Շինուհայր բնակավայրի երաժշտական դպրոցի վերանորոգում», «Տաթև համայնքի Շինուհայր բնակավայրի մանկապարտեզի շենքի մի հատվածի վերանորոգում» և «Տաթև համայնքի Տաթև բնակավայրի ՆՈՒՀ-ի վերանորոգում» ծրագրերի իրականացման ընթացքում առաջացած «Փոփոխված աշխատանքային ծավալների համադրման» համապատասխան ակտերը, հաշվի առնելով ՄԱԿ–ի Պարենի համաշխարհային ծրագրի 2023 թվականի մարտի 21–ի գրությունը, «Շտիգեն» ՍՊԸ–ի 2023 թվականի մարտի 27–ի գրությունը և ՄԱԿ–ի Պարենի համաշխարհային ծրագրի ու «Շտիգեն» ՍՊԸ–ի միջև 2023 թվականի մարտի 1–ին կնքված WFP/AMCO/2023/4400316796 համաձյնագիրը, նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով՝ կողմ-8, դեմ-0, ձեռնպահ-0, ավագանին ***որոշում է՝***

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի 2023 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 54-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1.1. Որոշման 3-րդ կետի 2-րդ հատվածում (համայնքի բյուջեի ծախսերն ըստ գործառնական դասակարգման) կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն հավելված 2-ի:

1.2. Որոշման 4-րդ կետի 3-րդ հատվածում (համայնքի բյուջեի ծախսերն ըստ տնտեսագիտական դասակարգման) կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն հավելված 3-ի:

1.3. Որոշման 7-րդ կետի 6-րդ հատվածում (համայնքի բյուջեի ծախսերն ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման) կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն հավելված 6-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՍԵՎԱԿ

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ՊԱՐՈՒՅՐ

ԳԵՐԱՍԻՄՅԱՆ ՄԱՐԱՏ

ԼԱԼԱՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՄԻՆԱՍՅԱՆ ԴԻԱՆՆԱ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՍՅԱ

ՎԼԱԴԻՄԻՐՅԱՆ ՆԱՌԱ

ՓԱՐՍՅԱՆ ԵԳՈՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՄՎԵԼ ԼԱԼԱՅԱՆ**

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

1. ՄԱԿ–ի Պարենի համաշխարհային ծրագրի շրջանակներում Տաթև համայնքին է նվիրաբերվում 40.15 կՎտ դրվածքային հզորությամբ արևային ֆոտովոլտային կայան: Պայմանավորված սույն կայանի տեղադրման հետ կապված առաջացած լրացուցիչ ֆինանսական ծախսերով՝ անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի 2023 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 54-Ն որոշման 3-րդ կետի 2-րդ հատվածում, 4-րդ կետի 3-րդ հատվածում և 7-րդ կետի 6-րդ հատվածում կատարել համապատասխան փոփոխություններ և լրացումներ, այն է՝ համայնքի 2023 թվականի բյուջեից 1150000(մեկ միլիոն մեկ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ հատկանցել՝ վերը նշված կայանի տեղադրման աշխատանքներն իրականացնող «Շտիգեն» ՍՊԸ–ին ծրագիրն իրականացնելու նպատակով:

2. Տաթև համայնքի՝ «Շինուհայր բնակավայրի երաժշտական դպրոցի վերանորոգում», «Տաթև համայնքի Շինուհայր բնակավայրի մանկապարտեզի շենքի մի հատվածի վերանորոգում» և «Տաթև համայնքի Տաթև բնակավայրի ՆՈՒՀ-ի վերանորոգում» ծրագրերի իրականացման ընթացքում առաջացել է համադրման և լրացուցիչ աշխատանքների կատարման անհրաժեշտություն, ուստի համաձայն «Փոփոխված աշխատանքային ծավալների համադրման» համապատասխան ակտերի՝ անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի 2023 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 54-Ն որոշման 3-րդ կետի 2-րդ հատվածում, 4-րդ կետի 3-րդ հատվածում և 7-րդ կետի 6-րդ հատվածում կատարել համապատասխան փոփոխություններ և լրացումներ, այն է համայնքի 2023 թվականի բյուջեից 8358089(ութ միլիոն երեք հարյուր հիսունութ հազար ութսունինը) ՀՀ դրամ հատկանցել՝ վերը նշված ծրագրերի շինարարական աշխատանքներն իրականացնող համապատասխան կազմակերպություններին:

Տաթևի համայնքապետարանի աշխատակազմի
գլխավոր մասնագետ՝ Արթուր Հովակիմյան

ՏԵՂԵԿԱՆՔ

Սույն որոշման նախագծի ընդունման դեպքում համայնքի բյուջեի ծախսային մասում նախատեսվում է 9508089(ինը միլիոն հինգ հարյուր ութ հազար ութսունինը) ՀՀ դրամի ծախս:

Տաթևի համայնքապետարանի աշխատակազմի
գլխավոր մասնագետ՝ Արթուր Հովակիմյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Շինուհայր, (0284) 95530 tatev.syuniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ԱՊՐԻԼԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ N 11-Ա

ՄԱԿ-Ի ՊԱՐԵՆԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 40.15 ԿՎԱ ԴՐՎԱԾՔԱՅԻՆ ՀԶՈՐՈՒԹՅԱՄԲ ԱՐԵՎԱՅԻՆ ՖՈՏՈՎՈԼՏԱՅԻՆ ԿԱՅԱՆԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՀԱՄԱՆԵՐԴՐՈՒՄ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-հոդվածի 10-րդ մասով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետով, հաշվի առնելով ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի 2023 թվականի մարտի 21-ի գրությունը, «Շտիգեն» ՍՊԸ-ի 2023 թվականի մարտի 27-ի գրությունը և ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի ու «Շտիգեն» ՍՊԸ-ի միջև 2023 թվականի մարտի 1-ին կնքված WFP/AMCO/2023/4400316796 համաձայնագիրը, համաձայն համայնքի ղեկավարի առաջարկության, որոշման նախագծի կողմ-8 , դեմ-0 , ձեռնպահ-0, քվեարկության արդյունքներով, ավագանին ***որոշում է.***

1. Տալ համաձայնություն՝ ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի կողմից Տաթև համայնքում 40.15 կՎտ դրվածքային հզորությամբ արևային ֆոտովոլտային կայանի տեղադրման ծրագրին:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով համայնքի 2023 թվականի բյուջեից ապահովել 1150000 (մեկ միլիոն մեկ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ համաներդրումը(դրամաշնորհի տեսքով):

3. Սույն որոշման 2-րդ կետում նշված 1150000 (մեկ միլիոն մեկ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը Տաթև համայնքի 2023 թվականի բյուջեի ծախսային համապատասխան հաշվից փոխանցել ծրագիրը իրականացնող «Շտիգեն» ՍՊԸ-ի հաշվին՝ Տաթև համայնքի և «Շտիգեն» ՍՊԸ-ի միջև համապատասխան դրամաշնորհային պայմանագիր կնքելուց հետո:

4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից հետո հաջորդող օրվանից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՍԵՎԱԿ

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ՊԱՐՈՒՅՐ

ԳԵՐԱՍԻՄՅԱՆ ՄԱՐԱՏ

ԼԱԼԱՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՄԻՆԱՍՅԱՆ ԴԻԱՆՆԱ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՍՅԱ

ՎԼԱԴԻՄԻՐՅԱՆ ՆԱՌԱ

ՓԱՐՍՅԱՆ ԵԳՈՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՄՎԵԼ ԼԱԼԱՅԱՆ**

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Ս/թ մարտի 1-ին ՄԱԿ–ի Պարենի համաշխարհային ծրագրի և «Շտիգեն» ՍՊԸ-ի միջև կնքվել է համաձայնագիր, ըստ որի Տաթև համայնքի Հալիձոր գյուղի մշակույթի տան շենքին պետք է տեղադրվեր 40.15 կՎտ դրվածքային հզորությամբ արևային ֆոտովոլտային կայան, սակայն ուսումնասիրության ժամանակ պարզվել է, որ նշված շենքի տանիքի մակերեսը բավարար չէ նման հզորությամբ կայանի տեղադրման համար: Հաշվի առնելով ֆոտովոլտային կայանների տեղադրման կարևորությունն ու անհրաժեշտությունը՝ համայնքի կողմից Շինուհայր գյուղում տրամադրվել է տարածք, որից հետո երկու շինությունների տանիքների գումարային մակերեսը բավականացրել է ծրագիրն իրագործելու համար, սակայն կատարված վերահաշվարկի արդյունքում առաջացել են լրացուցիչ ծախսեր: Քանի որ ՄԱԿ–ի Պարենի համաշխարհային ծրագրի և «Շտիգեն» ՍՊԸ-ի միջև կնքված համաձայնագրով նախատեսված գումարը ֆիքսված է, ուստի, ելնելով վերոգրյալից, անհրաժեշտ է համայնքի 2023 թվականի բյուջեից 1150000(մեկ միլիոն մեկ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ փոխանցել «Շտիգեն» ՍՊԸ–ի հաշվին ծրագիրն իրականացնելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ ՄԱՐԱՏ ԳԵՐԱՍԻՄՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

Սույն որոշման նախագծի ընդունման դեպքում համայնքի բյուջեի ծախսային մասում նախատեսվում է 1150000(մեկ միլիոն մեկ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամի ծախս:

Գլխավոր մասնագետ՝ Արթուր Հովակիմյան

Հարգելի Սամվել Լալայան,

Հարգելի Մարատ Գերասիմյան,

Ուրախ ենք տեղեկացնել, որ Տաթև համայնքը ընդգրկվել է ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի «Կանաչ էներգիայի վերաֆինանսավորում» նախաձեռնությունում, որի շրջանակներում ձեր համայնքը կստանա 40 կվտ հզորության արևային կայան: Ծրագրի նպատակն է արևային կայանի արտադրած հոսանքի խնայողություններով յուրաքանչյուր տարի ձեր իսկ համայնքի այլ բնակավայրերում տեղադրել առնվազն 10 կվտ հզորության արևային կայան (5 տարվա կտրվածքով): Մնացած և հետագա խնայողությունները կուղղվեն համայնքային, այդ թվում նաև գյուղատնտեսական խնդիրների լուծմանը՝ համայնքի որոշմամբ:

ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագիրը կֆինանսավորի արևային կայանի արժեքը ամբողջությամբ, ներառյալ կայանի տեղափոխման, տեղադրման հետ կապված բոլոր ծախսումները:

Համայնքից ակնկալվում է իրականացնել միայն եռաֆազ հոսանքի կայանին համապատասխանեցման ծախսումները, երկկողմանի հաշվիչի ձեռքբերումը, ինչպես նաև չնախատեսված ծախսումներ՝ կապված տանիքի ամրացման, լրացուցիչ հենակների տեղադրման, նաև՝ լրացուցիչ ծախսումներ, եթե դրանք կառաջանան շենքի տանիքի մակերեսի չբավարարելու դեպքում:

Շնորհավորում ենք ծրագրում ընդգրկվելու համար և ակնկալում արդյունավետ համագործակցություն:

Հարգանքով՝

Վահան Առաքելյան

Vahan Arakelyan

Programme Associate, FVC Projects Coordinator

United Nations World Food Programme

Armenia Country Office

14 P. Adamyan Str, Yerevan 0010 Armenia

Tel Mob +374 91 429062

vahan.arakelyan@wfp.org

WFP World Food Programme

SHTIGEN
ENERGY SYSTEMS

Shtigen LLC
D. Anhaght 23/6
Yerevan, Armenia
+374 11 23 00 23
www.shtigen.com

27.03.2023 թ.

Գրություն

Հարգելի գործընկերներ,

Համաձայն ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի և «Շտիգեն» ՍՊԸ միջև կնքված համար WFP/AMCO/2023/4400316796 համաձայնագրի, «Շտիգեն» ՍՊԸ-ն Տաթև համայնքի Հալիձոր գյուղի մշակույթի տան շենքի վրա պետք է տեղադրեր 40.15 կՎտ դրվածքային հզորությամբ արևային ֆոտովոլտային կայան:

Շենքի ուսումնասիրության ժամանակ պարզվեց, որ նշված տեսակի տանիքի վրա հնարավոր չէ տեղադրել 40.15 կՎտ հզորությամբ կայան, ուստի «Շտիգեն» ՍՊԸ-ն դիմել է Տաթև համայնքին՝ համայնքի տարածքում վերը նշված չափի արևային ֆոտովոլտային կայանի տեղադրման համար բավարար մակերես և այլ տեխնիկական պահանջներին համապատասխանող տանիք ունեցող շինություն տրամադրելու խնդրանքով: Համայնքի կողմից տրամադրվել է շինություն Շինուհայր գյուղում, որի տանիքի մակերեսը ևս բավարար չի եղել 40.15 կՎտ հզորությամբ կայանի տեղադրման համար, սակայն Հալիձոր գյուղի մշակույթի տան շենքի տանիքի հետ նրա գումարային մակերեսը արդեն բավականացնում է 40.15 կՎտ հզորությամբ կայանի տեղադրման համար:

«Շտիգեն» ՍՊԸ կողմից կատարել է կայանի վերահաշվարկ, բաշխել նրա հզորությունը 2 մասի՝ 14.85 կՎտ և 25.3 կՎտ հզորությամբ մասերի՝ համապատասխանաբար Հալիձոր գյուղի մշակույթի տան շենքի տանիքի և Շինուհայր գյուղի շինության տանիքի համար: Վերահաշվարկի արդյունքում առաջանում են լրացուցիչ ծախսեր՝ ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի և «Շտիգեն» ՍՊԸ միջև կնքված համաձայնագրով նախատեսված գնից բացի, քանի որ՝

- փոխվում են ի սկզբանե նախատեսված փոխակերպիչները
- Շինուհայր գյուղի շինության տանիքին էլեկտրաէներգիայի օպտիմալ արտադրանք ստանալու համար վահանակները ուղղվում են հարավ և քանի որ այդ ուղղությամբ տանիքի ծածկի թեքությունը մոտ է զրոյին, ավելացվում են վահանակներին հորիզոնական հարթության նկատմամբ թեքություն ապահովող եռանկյունաձև հենակային դետալներ

Քանի որ ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի և «Շտիգեն» ՍՊԸ միջև կնքված համաձայնագրով նախատեսված գումարը ֆիքսված է, հետևաբար Տաթև համայնքին խնդրում ենք դիտարկել համայնքի կողմից այդ ծախսերի վճարման հարցը:

Ստորև ներկայացնում ենք կատարված հաշվարկները՝

	Կայանի հզորություն, կՎտ	Կայանի տարեկան արտադրանք, կՎտժ	Գումարային տարբերություն ՄԱԿ-ի Պարենային Ծրագրի կողմից հաստատված գնից, ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ
Հալիձորի մշակույթի տան շենքի տանիքին ծածկի մակերևույթին զուգահեռ պառկեցրած վահանակներով	14.85	17,690.00	
Շինուհայրի տանիքին եռանկյունաձև հենակներով անկյունը բարձրացրած և դեպի հարավ ուղղած	25.3	30,620.00	

SHTIGEN
ENERGY SYSTEMS

Shtigen LLC
D. Anhaght 23/6
Yerevan, Armenia
+374 11 23 00 23
www.shtigen.com

ADJUSTABLE TRIANGLE 28-35 - ՄԵԾ ՖՎ-ի ԵՌԱՆԿՅՈՒՆԻ ՀԵՆԱԿ (Սրանք Շինուհայր գյուղի շինության տանիքի վրա ֆոտովոլտային վահանակների անկյունը բարձրացնելու համար օգտագործվող դետալներն են)	46 վահանակի համար		627,900.00
L-50*50-2.0m (Սրանք Շինուհայր գյուղի շինության տանիքի վրա ֆոտովոլտային վահանակների անկյունը բարձրացնելու համար օգտագործվող դետալներ են)	46 վահանակի համար		309,580.00
Հենակային համակարգի մոնտաժ (Սա նախնական պայմանագրով նախատեսված 40 կՎտ փոխակերպիչի և 1 հատ 15 կՎտ հզորությամբ և 1 հատ 25 կՎտ հզորությամբ փոխակերպիչների գնային տարբերությունն է)			212,520.00

Տնօրեն՝ _____ **Հայկ Ճեկյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Շինուհայր, (0284) 95530 tatev.syuniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ԱՊՐԻԼԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ N 12-Ա

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻՑ ԱՆՀԱՏՈՒՅՑ (ՄՇՏԱԿԱՆ) ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՍԻՄՈՆՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ՀՈՂԱՄԱՍ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մարմինների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 75-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. ապրիլի 21-ի N286 որոշմամբ հաստատված կարգի 38-39-րդ կետի և հիմք ընդունելով Սիմոնյան կրթական հիմնադրամի 07.03.2023թ. գրությունն ու Տաթև համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի կողմ-8, դեմ-0, ձեռնպահ-0 քվեարկության արդյունքներով, ավագանին ***որոշում է՝***

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, բնակավայրերի նշանակության հողերից 0,01125 հեկտար խառը կառուցապատման հողամասը (կադաստրային ծածկագիր՝ 09-073-0029-ից) անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով, <<Թումոն տուփի մեջ>> ծրագրի իրականացման համար հատկացնել Սիմոնյան կրթական հիմնադրամին:

2.Համայնքի ղեկավարին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Սիմոնյան կրթական հիմնադրամի հետ կնքել հողամասի անհատույց (մշտական) օգտագործման իրավունքի պայմանագիր՝ ապահովելով կնքված պայմանագրից ծագող գույքային իրավունքների պետական գրանցումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՍԵՎԱԿ

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ՊԱՐՈՒՅՐ

ԳԵՐԱՍԻՄՅԱՆ ՄԱՐԱՏ

ԼԱԼԱՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՄԻՆԱՍՅԱՆ ԴԻԱՆՆԱ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՍՅԱ

ՎԼԱԴԻՄԻՐՅԱՆ ՆԱՌԱ

ՓԱՐՍՅԱՆ ԵԳՈՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԼԱԼԱՅԱՆ

ՍՏԵՂԾԱՐԱՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

www.tumo.org
info@tumo.org

ՀՀ, Սյունիքի Մարզ, Տաթև համայնքի ղեկավար՝ Սամվել Լալայանին
ԹՈՒՄՈ ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի
տնօրեն Մարի Լու Փափազյանից

Հարգելի պարոն Լալայան,
Դիմում եմ ձեզ Սիմոնյան կրթական հիմնադրամի անունից (Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն):

Ինչպես գիտեք, Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնը անվճար կրթական ծրագիր է պատանիների համար տեխնոլոգիաների և դիզայնի ոլորտներում: Մեր նպատակն է Թումոյի կրթական փորձառությունը հասանելի դարձնել Հայաստանի և Արցախի բոլոր պատանիներին՝ Թումո Հայաստան ծրագրի միջոցով:

Թումո Հայաստան նախաձեռնության շրջանակներում առաջիկա հինգ տարիներին նախատեսվում է մարզերի խոշոր քաղաքներում ունենալ տեխնոլոգիաներով հագեցած 16 Թումո կենտրոն, իսկ փոքր համայնքներում 110 Թումո տուփ, որոնց միջոցով ծրագիրը հասանելի կդառնա բոլոր պատանիներին՝ ողջ երկրով մեկ: Թումո տուփը փոքր, սակայն տեխնիկապես հագեցած մինի Թումո է: Այն կարող է տեղադրվել ցանկացած քաղաքում կամ գյուղում և ծառայել որպես ինքնուսուցման տարածք տեղի պատանիների համար: Ուսանողներն ինքնուսուցման փուլն անցնում են իրենց քաղաքում, իսկ գործնական դասընթացների մասնակցելու համար մեկնում են մոտակա Թումո կենտրոններ կամ միանում են դրանց՝ առցանց: Յուրաքանչյուր Թումո տուփ հնարավորություն է տալու տեխնոլոգիաների և դիզայնի ոլորտներում կրթությամբ ապահովել տարեկան շուրջ 320 պատանու:

Սույն ծրագրի շրջանակներում՝ 2023-2024 թվականների ընթացքում, Սիմոնյան կրթական հիմնադրամը պլանավորվում է նմանատիպ տուփեր տեղադրել Ձեր համայնքի հետևյալ բնակավայրում՝

- Շինուհայր գյուղում

Այդ նպատակով դիմում ենք Ձեզ աջակցելու մեր ծրագրին՝ տուփի համար նախատեսված հողահատկացման հարցում: Տուփի տեղադրման համար անհրաժեշտ հողամասի պահանջներն են՝

- 120 քմ (10մ x 12մ) - մեկ տուփի համար
- հասանելի կոմունիկացիաներ - ջուր, կոյուղի, հոսանք
- մոտ դպրոցներին կամ այլ երիտասարդական կենտրոններին
- հավասարաչափ հասանելի համայնքի տարբեր մասերից

Թումոյի ընդլայնումը Սյունիքի մարզում իրականացնելու գործում մենք չափազանց կարևորում ենք համայնքների հետ արդյունավետ համագործակցությունը: Մեր պլանները ներկայացնելու, գործընթացը և Ձեր հետ հսամագործակցությունը քննարկելու նպատակով խնդրում ենք կապ հաստատել Թումոյի ընդլայնման նախագծի ղեկավար Անուշ Աբգարյանի հետ՝ 098 788 308:

Հարգանքով՝
Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի
Գլխավոր տնօրեն՝
Մարի Լու Փափազյան

Հալաբյան 16,
0038 Երևան, Հայաստան
+374-10 398 413

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Շինուհայր, (0284) 95530 tatev.syuniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ԱՊՐԻԼԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ N 13-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 56-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների դրույթներով, համաձայն Տաթև համայնքի ղեկավարի առաջարկության, որոշման նախագծի կողմ-8, դեմ-0 , ձեռնպահ- 0, քվեարկության արդյունքներով, ավագանին ***որոշում է՝***

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի ավագանու «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը սահմանելու մասին» 2022 թվականի դեկտեմբերի 26-ի N 56-Ա որոշման 2-րդ կետով սահմանված N 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՍԵՎԱԿ

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ՊԱՐՈՒՅՐ

ԳԵՐԱՍԻՄՅԱՆ ՄԱՐԱՏ

ԼԱԼԱՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՄԻՆԱՍՅԱՆ ԴԻԱՆՆԱ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՍՅԱ

ՎԼԱԴԻՄԻՐՅԱՆ ՆԱՌԱ

ՓԱՐՍՅԱՆ ԵԳՈՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԼԱԼԱՅԱՆ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Տաթև համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը սահմանելու մասին» 2022 թվականի դեկտեմբերի 26-ի N 56-Ա որոշման 2-րդ կետով սահմանված N 2 հավելվածում <<Շինուհայրի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության, հաստիքացուցակում երաժիշտ դաստիարակի հաստիքի ավելացման համար հիմք է հանդիսացել ծնողների ինչպես նաև դաստիարակների առաջարկը:

Գլխավոր մասնագետ Արթուր Հովակիմյան

10.04.2023 թ.